

## Դոնեվն ընդդեմ Բուլղարիայի

2021 թվականի հոկտեմբերի 26-ին Մարդու իրավունքների եվրոպական Դատարանը /այսուհետ՝ ՄԻԵԴ/ դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտին առնչվող հետաքրքիր վճիռ է կայացրել ընդդեմ Բուլղարիայի:

Գործը մասնավորապես վերաբերել է կարգապահական վարույթի շրջանակներում դատարանի նախագահ դատավորին պաշտոնից ազատելուն, ինչով պայմանավորված Դիմումատուն դիմել է ՄԻԵԴ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո Բարձրացնելով որոշում կայացրած Բարձրագույն դատական խորհրդի և Բարձրագույն վարչական դատարանի անկախության ու անկողմնակալության բացակայության հարցը:

### Գործի փաստերը

2008 թվականին մամուլում «12 միլիոն լեւ /բուլղարական ազգային դրամ/ յուրացված գումարը շրջանառվում է ամբողջ երկրում» վերնագրով նյութ է հրապարակվել: Հոդվածը մեղադրել է այդ ժամանակ դատավոր և դատարանի նախագահ Դիմումատունին այն բանում, որ վերջինս կասկածելի հանգամանքներում բանկային խարդախության գործով կատարողական թերթ է տվել: Դատավորին մեղադրել են նաև նրանում, որ չունենալով տարածքային ենթակայություն, այնուհանդերձ քննել է դիմումը, ավելին, խախտելով գործը ավտոմատ մակագրելու կանոնը, իրեն է մակագրել գործը: Ավելին, կողմերից մեկին ազատել է դատական տուրքերից, որոնք գործի շրջանակում հասել են մի քանի միլիոնի: Գործով կողմերից մեկի փաստաբանը 2009 թվականին սպանվել է, երրորդ կողմ ներգրավված անձը ձերբակալվել է սպանության գործով և մեղավոր ճանաչվել:

2008թ-ին Բուլղարիայում գործող Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական վարույթ է հարուցվել Դիմումատուի դեմ և վերջինս ընդհանուր 25 ձայների 13 կողմ, 9 դեմ, մեկ ձեռնպահ ձայներով քվեարկության արդյունքում ազատվել է պաշտոնից:

Դիմումատուն բողոքարկել է այդ որոշումը Գերագույն վարչական դատարան, ինչը 3 դատավորի կազմով մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ: Դիմումատուն կրկին բողոքարկել է և այս անգամ հինգ դատավորի կազմով պանելը որոշել է, որ Խորհուրդը որոշում կայացնելիս խախտել է ընթացակարգային կանոններ, քանի որ երկու պատասխանատվության միջոց է կիրառվել դիմումատուի նկատմամբ՝ դատավորի պաշտոնից ազատում և որպես նախագահ ազատում: Հինգ դատավորի կազմով պանելը գործը ուղարկել է Խորհուրդ նոր ուսումնասիրության: Խորհուրդը նոր քննությամբ 2010 թվականին գաղտնի քվեարկությամբ 13 կողմ, 5 դեմ ձայներով որոշել է դադարեցնել դիմումատուի լիազորությունները որպես դատավոր: Քանի որ որպես դատարանի

նախագահ նրա պաշտոնավարման ժամկետը վերջացած է եղել, այդ հարցը այլևս չի քննարկվել:

Դիմումատուն կրկին բողոքարկել է այդ որոշումը, սակայն այն մնացել է անփոփոխ և արձանագրվել է, որ որևէ խախտում տեղի չի ունեցել:

### **ՄԻԵԴ գանգատի էությունը**

Հենվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա Դիմումատուն բողոքել է, որ իր դեմ հարուցված կարգապահական վարույթը անարդար է եղել, Բարձրագույն դատական խորհուրդն ու Գերագույն վարչական դատարանը չեն բավարարել անաչառության ու արդարության պահանջները: Հենվելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա /անձնական ու ընտանեկան կյանքի պաշտպանություն/՝ Դիմումատուն նշել է, որ պաշտոնից ազատումը վնաս է հասցրել իր հեղինակությանն ու համբավին:

### **ՄԻԵԴ վճռի էությունը**

#### **Կոնվենցիայի 6-րդ հոդված/Արդար դատաքննության իրավունք**

Դատարանը նշել է, որ Բուլղարիայի ներպետական օրենսդրության համաձայն Բարձրագույն դատական խորհուրդը դատական մարմին է հանդիսացել՝ ոչ դատարաններին համահավասարեցրած ատյան, ոչ էլ վարչական մարմին, որը հաշվետու է գործադիրին: Խորհուրդը օրենքով սահմանված մարմին է, կարգապահական վարույթներ քննելիս իրավասու է եղել գնահատել փաստերն ու որոշում կայացնել դատավորի պատասխանատվության վերաբերյալ: ՄԻԵԴ նախադեպերի ներքո այն կարող է համարվել դատական ատյան, ինչին վերագրելի են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքները:

ՄԻԵԴ-ը հաստատել է, որ գործող Գերագույն վարչական դատարանը, ի թիվս այլ լիազորությունների, կարող է հստակեցնել, թե արդյոք Խորհուրդը ճիշտ է մեկնաբանել օրենքով նախատեսված չափանիշները: ՄԻԵԴ-ը նշել է, որ Խորհրդի որոշումը ընդունվել է ընթացակարգային երաշխիքները պահպանելով, ինչը նախատեսված է եղել օրենքով:

Ինչ վերաբերում է Գերագույն վարչական դատարանին, ՄԻԵԴ-ը հաստատել է, որ այն երկրի գերագույն դատարանն է հանդիսացել՝ կազմված բացառապես պրոֆեսիոնալ դատավորներից, ովքեր ունեն Սահմանադրությամբ ամրագրված անկախության երաշխիքներ ու անհամատեղելիության պահանջներ, ինչը իրապես ապահովել է նրանց անկախությունը: Խորհուրդը իր հերթին կազմավորվել է և ստացել մանդատ դատական համակարգի վարչարարությունն ապահովելու, համակարգի նշանակումներն ապահովելու ու կարգապահական վարույթներն իրացնելու համար՝ կրկին դատական համակարգի անկախության ապահովման նպատակով:

Անդրադառնալով Խորհրդի կազմին՝ /25 անդամ, որից 11-ը ննանակված Խորհրդարանի կողմից, 6-ը դատավորներ, ինչպես նաև դատական մագիստրալներ, դատախազներ/ ՄԻԵԴ-ը նշել է, որ իր նախնական գանգատի մեջ Դիմումատուն չի բարձրացրել Խորհրդի կազմի վերաբերյալ էական խնդիրներ: ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ չեն ներկայացվել Խորհրդի կոնկրետ անդամի կողմից անաչառության և/կամ կողմնակալ վերաբերմունքի հանգամանքներ, ինչը կասկածի տակ կոդեր որոշումը:

Նմանապես, նշվել է, որ բավարար ապացույցներ չկան կասկածի տակ դնելու նաև Գերագույն վարչական դատարանի անաչառությունը: Չեն արձանագրվել նաև իրավական որոշակիության խնդիրներ:

### **Կոնվենցիայի 8-րդ հոդված- Անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանություն**

ՄԻԵԴ-ը հաստատված է համարել, որ Դիմումատուն ազատվել է աշխատանքից դատավորի և դատարանի նախագահի համար գործող պարտավորություններն ու կանոնները խախտելու հիմքով: Դիմումատուն օգտվել է իրավական պաշտպանությունից, ունեցել է իր պնդումները ներկայացնելու և բողոքարկելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է կայացված որոշման խստությանը, ապա ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ներպետական իրավասու մարմինները հիմնավորել են կայացրած որոշումը՝ հիմքում դնելով դատավորի թույլ տված խախտումների լրջությունը, ինչը բացասաբար է ազդել դատական իշխանության հեղինակության վրա:

ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ Դիմումատուն ընթացող կարգապահական վարույթի առնչությամբ ունեցել է պաշտպանության ընթացակարգային երաշխիքներ, և, նկատի ունենալով պետությանը տրված հանցողության սահմանները, կիրառված պատասխանատվության միջոցը հիմնավոր է եղել և համաչափ թույլ տրտած մասնագիտական պարտավորությունների խախտմանը: